ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՓՈՔՐ ԵՎ
ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
Small & Medium Entrepreneurship Development National Center of Armenia

N 13/678-13
«23» 10 2013 թ.

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
պրն՝ Գ. Մելքոնյանին

Հարգելի պարոն Մելքոնյան

Ի պատասխան Ձեր 2013 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 04/18.1/6043-13 գրության հայտնում ենք, որ ՄԱԶԾ-ի «Աջակցություն առևտրին՝ Կենտրոնական Ասիայի, Հարավային Կովկասի և Արևմտյան ԱՊՀ երկրների համար (Հայաստան)» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում "Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն" հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) հետ համագործակցությամբ 2012-2013թթ. իրականացվել են հետևյալ հիմնական միջոցառումները.

- Ստեղծվել է առցանց շուկա ինտերնետային պորտալ, որը տեղադրված է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի պաշտոնական կայքում (http://marketplace.smednc.am): Ներկայումս ավելի քան 3,700 օգտատերեր (ՓՄՁ–ներ, ֆերմերներ, վերամշակողներ, ծառայություն մատուցողներ և այլն) Հայաստանի բոլոր տասը մարզերից գրանցված են ինտերնետային պորտալում: Գրանցված օգտատերերը կարող են ներկայացնել իրենց արտադրանքը, ծառայությունները և գները, ինչպես նաև գտնել գործընկերներ: Կայքի համալրման աշխատանքները ընթացքի մեջ են:
- 2012թ. աջակցություն է ցուցաբերվել Այրում, Բագրատաշեն, Նոյեմբերյան, Բերդ, Բերքաբեր, Տավուշ և Իջևան համայնքների չրագործությամբ զբաղվող 14 ՓՄՁ սուբյեկտների: Մասնավորապես ՓՄՁ-ները ձեռք են բերել գիտելիքներ և հմտություններ ինչպես բիզնեսի պլանավորման, այնպես էլ չրերի արտադրության տեխոլոգիայի բնագավառում, մշակել են իրենց գործարար ծրագրերը, ինչպես նաև համաֆինանսավորման սկզբունքով ֆինանսական աջակցություն են ստացել չորանոցների ձեռբերման համար: Ընթացքի մեջ է Նոյեմբերյան, Կոթի, Կողբ և Պտղավան համայնքներից ևս 4 չրագործությամբ զբաղվող գործարարներին չորանոցների տրամադրման հարցը:

Միհր Մկրտչյան 5ա 0010, Երևան ՀՀ
5a Miher Mkrtchyan str, 0010, Yerevan RA
info@smednc.am
www.smednc.am
Հ./ T: (+374 10) 541 648
Ֆ./ F: (+374 10) 541 642

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
«24» 10 2013 թ.
Մուտք No 10918
ՀԻՄՔ
ՀԱՎԵԼՎԱԾ

- Ծրագրի շրջանակներում ՀՀ Տավուշի մարզի Պտղավան եւ Տավուշ համայնքներում կառուցվել են կաթիլային ոռոգմամբ 29 ջերմոցներ և տրամադրվել են բարձրորակ սածիլներ: Առաջին հինգ ամիսների ընթացքում նշված համայնքներում արտադրվել է շուրջ 38 տ բանջարեղեն (լոլիկ, վարունգ, պղպեղ, լոբի):
- Ծրագրի շրջանակներում կազմակերպվել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ներկայացուցիչների այցը Բաթումի, որի արդյունքում համագործակցության հուշագիր է ստորագրվել Բաթումիի բիզնես–ինկուբատոր կենտրոնի հետ: Կողմերը պայմանավորվել են իրականացնել փորձի և տեղեկատվության փոխանակում, մշակել և իրականացնել համատեղ նախաձեռնություններ, կազմակերպել փոխադարձ ուսումնական այցեր, սեմինարներ, հանդիպումներ և նպաստել երկու երկրների գործարարների միջև առևտրային կապերի հաստատմանը:
- Ներկայումս քննարկվում է ՀՀ Տավուշի մարզի Բագրատաշեն համայնքում հավաքման կենտրոնի ստեղծման հարցը որի միջոցով կկազմակերպվի թարմ մրգի, չրի եւ արևաձաղիկ սերմերի (որը լայնորեն աճում է համայնքում) հավաքումը, տեսակավորումը, պահպանումն ու փաթեթավորումը:

Ընդհանուր առմամբ գտնում ենք, որ Ծրագիրն արդյունավետ է և ՀՀ Տավուշի մարզի բազմաթիվ համայնքներում արդեն իսկ իրականացված միջոցառումները տվել են իրենց դրական արդյունքները և Ծրագիրը կունենա իր որոշակի ազդեցությունը ՀՀ Տավուշի մարզի տնտեսական զարգացման վրա: Ուստի, նպատակարմար ենք գտնում համաձայնագրի ստորագրումը ՀՀ կառավարության կողմից:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը շարունակական աջակցություն կցուցաբերի Ծրագրի շահառու ՓՄՁ-ների կարողությունների զարգացման, արտադրության որակի բարելավման և շուկայավարման հարցերում՝ ապահովելով Ծրագրի շարունակականությունը և կայունությունը:

Հարգանքով՝

գործադիր տնօրեն Վ. Կարապետյան